ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ N 2/4

5 մարտի, 2012 թվականի

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 3-րդ և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետերով Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. <Երևանի պետական համալսարանի ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունում՝ (հաստատված ԵՊՀ գիտական խորհրդի 2012թ. փետրվարի 9-ի նիստում) (այսուհետ՝ Կանոնադրություն) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.1. Կանոնադրության 19-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ.
<19. Խորհրդի ընտրովի անդամներ կարող են առաջադրվել միայն տվյալ ստորաբաժանման հիմնական և ներքին համատեղությամբ աշխատողները:>:

1.2. Կանոնադրության 20-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ.
<20. Խորհրդի անդամների 25 տոկոսը սովորողներն են, որոնց ընտրությունն իրականացնում է ֆակուլտետի ուսանողական խորհուրդը (ներառելով ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում ընդգրկված ուսանողական խորհրդի մեկ ընտրովի ներկայացուցչի):>:

1.3. Կանոնադրության 72-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.
<72. Ամբիոնի կրթական և գիտական հարցերը քննարկվում են ամբիոնի պրոֆեսորադասախոսական համակազմի նիստերում: Ամբիոնի նիստերին վճռական ձայնի իրավունքով մասնակցում են ամբիոնի պրոֆեսորադասախոսական համակազմի հիմնական աշխատողները: Ամբիոնի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել դեկանը կամ տեղակալը, ամբիոնի գիտաշխատողները, ասպիրանտները, ուսումնաօժանդակ համակազմը և այլ աշխատողները:>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ